

## ԾՐԱԳԻՐ

### «ԼԻԱՐՇԵՔ ԿՅԱՆՔ» ներառական հասարակության խթանման հասարակական կազմակերպության

(կազմակերպության անվանումը)

### ԳՈՐԾՈՒՆՈՒԹՅԱՆ 10-ԱՄՅԱ

ԵՐԵՎԱՆ 2019

Ո-09/4442-19  
18.04.19թ

## I. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ

«ԼԻԱՐԺԵՔ ԿՅԱՆՔ» ներառական հասարակության խթանման հասարակական կազմակերպությունը ստեղծվել է (վերակազմակերպվել է) 1998 թ. հուլիսի 17-ի հիմնադիր ժողովի որոշմամբ: Կազմակերպության պետական գրանցման վկայականի համարն է 03U070095:

### 1.1. Կազմակերպության նպատակները և խնդիրները

«ԼԻԱՐԺԵՔ ԿՅԱՆՔ» ներառական հասարակության խթանման հասարակական կազմակերպության նպատակներն են (ըստ կազմակերպության կանոնադրության).

1. Պաշտպանել հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքներն ու օրինական շահերը:
2. Նպաստել ներառական հասարակության ձևավորմանը, իրականացնելով նպատակային ծրագրեր:
3. Իրականացնել շահերի և իրավունքների պաշտպանության քարոզարշավներ, միջոցառումներ, վերապատրաստումներ, իրավագիտակցության բարձրացմանն ուղղված ծրագրեր և այլն:

«ԼԻԱՐԺԵՔ ԿՅԱՆՔ» ներառական հասարակության խթանման հասարակական կազմակերպության կանոնադրությամբ սահմանված խնդիրներն են.

1. Իրականացնել սոցիալական, հոգեբանական աջակցության ծրագրեր, ներառելով հաշմանդամություն ունեցող անձանց և ընտանիքներին,
2. Նպաստել հաշմանդամություն ունեցող անձանց անկախ կյանքի կայացմանը, իրականացնելով նպատակային ծրագրեր,
3. Նպաստել ՄԱԿ –ի «Կայուն զարգացման 2030 օրակարգում» ներառված կայուն զարգացման նպատակների կյանքի կոչմանը, իրականացնելով նպատակային ծրագրեր և այլն:

### 1.2. Կազմակերպության գործունեության իրավական հիմքերը

«ԼԻԱՐԺԵՔ ԿՅԱՆՔ» ներառական հասարակության խթանման հասարակական կազմակերպությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է ՀՀ Սահմանադրությամբ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, հասարակական կազմակերպությունների մասին ՀՀ օրենքով և այլ իրավական ակտերով:



«ԼԻԱՐԺԵՔ ԿՅԱՆՔ» ներառական հասարակության խթանման հասարակական կազմակերպության աշխատողների միջև հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

### 1.3. Կազմակերպությունում առկա մարդկային ռեսուրսներն են.

( ղեկավար կազմի անուն, ազգանուն, հայրանուն, պաշտոն)

- ☑ Սուրեն Մաղաքյան Շալիկոյի, ծրագրի ղեկավար
- ☑ Քրիստինե Ասրյան Աշոտի, հատուկ մանկավարժ
- ☑ Վանուհի Գաբրիելյան Վանիկի- Հոգեբան
- ☑ Մարիաննա Գևորգյան Սամվելի- Սուրբո մանկավարժ
- ☑ Անահիտ Ղևոնդյան Աշոտի -Աշխատանքի ուս. ուսուցիչ
- ☑ Հերմինե Առաքելյան Ալբերտի -Սոցիալական աջակցող
- ☑ Անի Զաքարյան Եղիշի- Սոցիալական աշխատող
- ☑ Էմիլիա Գևորգյան Շաքարի- Ծրագրի ղեկավարի օգնական
- ☑ Ավետիսյան Մերի Սուրենի- ԱՀԿ ԴՄԴ սկզբունքների ներդրման և թեժ գծի խորհրդատու
- ☑ Հովսեփյան Անժելա Վարդանի- Կյանքի հմտությունների ուսուցչուհի
- ☑ Գասպարյան Անահիտ Հովհաննեսի Ադմինիստրատիվ օգնական
- ☑ Գևորգյան Գոհար Ազատի- Հաշվապահ
- ☑ Շալիկո Մաղաքյան Սուրենի- Վարորդ

(մշտական աշխատողների անուն, ազգանուն, հայրանուն, պաշտոն)

	Անուն ,ազգանուն	Կրթություն	Մասնագիտություն
1	Սուրեն Մաղաքյան Շալիկոյի	Թերի բարձրագույն	Սոցալական աշխատանք
2	Քրիստինե Ասրյան Աշոտի	Բարձրագույն	Հայոց լեզու և գրականություն
3	Վանուհի Գաբրիելյան Վանիկի	Բարձրագույն	Հոգեբանություն
4	Մարիաննա Գևորգյան Սամվելի	Բարձրագույն	Հատուկ կրթության մանկավարժություն և հոգեբանություն
5	Անահիտ Ղևոնդյան Աշոտի	Թերի բարձրագույն	Անգլերեն լեզու և գրականություն
6	Հերմինե Առաքելյան Ալբերտի	Միջն	Երաժշտության ուսուցչուհի

		մասնագ	
7	Անի Զաքարյան Եղիշի	Բարձրագույն	Սոցիալ-մշակ.գործուն., սոցիալական աշխատանք
8	Էմիլիա Գևորգյան Շաքարի	Միջին մասնագ	Լարային կապիսարքաշինություն
9	Ավետիսյան Մերի Սուրենի	Բարձրագույն	Հատուկ կրթության մանկավարժություն և հոգեբանություն
10	Հովսեփյան Անժելա Վարդանի	Բարձրագույն	Թարգմանչական գործ
11	Գասպարյան Անահիտ Հովհաննեսի	Թերի բարձրագույն	Թարգմանչական գործ
12	Գևորգյան Գոհար Ազատի	Բարձրագույն	Տնտեսագետ-հաշվապահ
13	Շալիկո Մաղաքյան Սուրենի	Բարձրագույն	Ինժեներ
14	Էլիզաբեթ Հովս	Բարձրագույն	Սոցիոլոգ

(ծրագրի իրականացման համար ներգրավված անձանց անուն, ազգանուն, հայրանուն, մասնագիտացում)

Սույն ծրագրի իրականացման համար նման է հանդիսանում

1. ՀՀ Կառավարության 2010 թ. հունիսի 21-ի թիվ 53-Ն որոշման համաձայն, օգնագործական կառույցների տրամադրված չափերից դուրս գալու արգելափակում:

2. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից հաստատված աշխատանքի տեղի և պայմանների կառավարման կոդեքսի հիմունքները:

3. Ձեռնարկի նիստում իրականացվող կապիտալ իրավունքների տնտեսական կառավարման:

Սույն ծրագրի իրականացման համար նման է հանդիսանում նաև իրականացվող աշխատանքի տեղի և պայմանների կառավարման կոդեքսի հիմունքները:



#### 1.4. Կազմակերպության գործունեության ոլորտը

«ԼԻԱՐԺԵՔ ԿՅԱՆՔ» ներառական հասարակության խթանման հասարակական կազմակերպության գործունեության ոլորտներն են՝

1. Սոցիալական, քաղաքաշինական, վերականգնողական, կրթական ուղղություններով իրականացվող աշխատանքներ, որոնք նպաստում են հաշմանդամություն ունեցող երեխաների և անձանց անկախ կյանքին :
2. Հաշմանդամություն ունեցող անձանց կրթությանն առնչվող քաղաքականություն
3. Սոցիալական ծառայությունների որակ և հասանելիություն
4. Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքներ

## II. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ

### 2.1. Ծրագրի նպատակը

10 /տաս/ տարի ժամկետով երկարացնել ՀՀ կառավարության 2010 թ. հունվարի 21 –ի թիվ 29 Ա որոշումը «Լիարժեք կյանք» ՀԿ –ին անհատույց օգտագործման իրավունքով Ստեփանավան քաղաքի Սայաթ-Նովա 3 հասցեում գտնվող 16333 հազ. դրամ գնահատված արժեքով, 465.6 քառ. մետր մակերեսով շենքի օգտագործման իրավունքը, ինչպես նա բարելավել շենքի վիճակը (հիմնանորոգել), որը կնպաստի հաշմանդամություն ունեցող երեխաներին տրամադրվող ծառայությունների որակին և թույլ կտա շահառուներին ունենալ ժամանակակից պայմաններին համապատասխան վերականգնողական կենտրոն:

Սույն ծրագրի իրականացման համար հիմք է հանդիսացել՝

1. ՀՀ կառավարության 2010 թ. հունվարի 21 –ի թիվ 29 Ա որոշումը շենքը անհատույց օգտագործման իրավունքով տրամադրելու մասին, կից ներկայացված է
2. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից տրամադրվող սուբսիդավորման նկարագիրը, կից ներկայացված է
3. Զինիշյան հիշատակի հիմնադրամի կողմից իրականացվող ներդրման մասին, կից ներկայացված է

Եթե ծրագրի իրականացման համար հիմք է հանդիսացել որևէ իրավական ակտ, ապա անհրաժեշտ է նշել իրավական ակտի անվանումը, համարը, տարեթիվը և ընդունող մարմինը:



Համայնքի կողմից իրականացվող ծրագրի դեպքում անհրաժեշտ է նշել Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ հաստատվող մարզի զարգացման սոցիալ-տնտեսական գործող ծրագրի հետ առնչությունը:

## 2.2. Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական աղբյուրները

Սույն ծրագրի շրջանակներում «Լիարժեք կյանք» կազմակերպության գործունեության կազմակերպման ֆինանսական աղբյուրներ են հանդիսանում.

1. ՀՀ պետական սուբսիդիա, տարեկան 11 մլն. դրամ,
2. Դոնոր կազմակերպությունների և անհատների նվիրատվություններ տարեկան 5 մլն. դրամ
3. Վճարովի ծառայություններ ուղղված հաշմանդամություն չունեցող անձանց, տարեկան 3 մլն. դրամ

(նշել ֆինանսավորող կազմակերպության անվանումը կամ ֆիզիկական անձի անուն, ազգանուն, հայրանուն, ֆինանսավորման չափը՝ ըստ տարիների)

## 2.3. Ծրագրի իրականացման ժամկետները

Սույն ծրագիրը նախատեսվում է իրականացնել 10 տարվա ընթացքում:

## 2.4. Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ միջոցառումները

Սույն ծրագրի շրջանակներում առաջիկա տարիներին «ԼԻԱՐԺԵՔ ԿՅԱՆՔ» ներառական հասարակության խթանման հասարակական կազմակերպությունը նախատեսում է իրականացնել հետևյալ միջոցառումները՝

ա/Նպաստել և խթանել հաշմանդամություն ունեցող երեխաների կարողությունների, ինքնությունության, հմտությունների զարգացմանն ու հասարակությունում ներառմանը: Լիարժեք կյանք ՀԿ-ն 2017 թվականից իրականացնում է ծրագիր, որը ֆինանսավորվում է ՅՈՒՆԻՍԵՖ Հայաստանի կողմից: Ծրագրին ուղղված է Առողջապահության համաշխարհային կազմակերպության ֆունկցիաների միջազգային դասակարգման սկզբունքների վրա հիմնված հաշմանդամության սահմանման մոդելի ներդրմանը/ՖՄՂ/: Ինչը ենթադրում է, որը Հայաստանում գործող, ծառայություններ մատուցող կազմակերպությունները կարող են հաշմանդամություն ունեցող երեխաներին ծառայություններ մատուցելուց առաջ գնահատել և հետո միայն կազմել վերականգնողական աջակցության պլան: Սա խիստ մասնագիտական աշխատանք է, որում



ներգրավված են հոգեբաններ, մանկավարժներ, երգոթերապիստներ, սոցիալական աշխատողներ և լոգոպեդներ: Մեր կազմակերպության թիմը արդեն իսկ ստեղծել է մեթոդական ձեռնարկ, որը վերաբերում է 2-18 տարեկան երեխաների գնահատմանը: Նախատեսվում է 11 հասարակական կազմակերպությունների համապատասխան մասնագետների վերապատրաստում և երեխաների գնահատման միասնական մոդելի կիրառում: Այս գործընթացը շատ կարևոր է, քանի որ պետությունը որդեգրել է նոր քաղաքականություն և ԲՄՓՀ գնահատումները իրականացվում են ՖՄԴ սկզբունքների հիման վրա, անձին հաշմանդամություն է տրվում միայն այս մեթոդով գնահատելու արդյունքում, իսկ մեր կողմից նման մոտեցումը կամ երեխաների գնահատումը, որպես ծառայություններ մատուցող կազմակերպություն, շատ կարևոր և այն առումով, որ թե հաշմանդամություն տրամադրող կառույցը և թե ծառայություն մատուցող կազմակերպությունը երեխայի կարիքները կգնահատի նույն գործիքով: Ինչը առավել արդյունավետ կլինի երեխայի հետ տարվող աշխատանքներում: Նախատեսվում է այս տարում գործընկեր կազմակերպությունների հետ աշխատանք և, իհարկե, կենտրոնների երեխաների գնահատում իրականացնել և տալ յուրաքանչյուր երեխայի համար աջակցության պլան: Կենտրոնը կարող է աջակցել մյուս ներառական կազմակերպություններին ևս :

Բ/Կանխարգելել կյանքի դժվարին իրավիճակները ընտանիքներում, ապահովել տվյալ ընտանիքի հետ կապ, աջակցել սոցիալական խնդիրների լուծմանը, ինչպես նաև, սոցիալական աջակցության տարածքային գործակալությունների (բաժինների) և աջակցող ցանցի այլ մասնակիցների հետ համագործակցությամբ, հայտնաբերել նոր շահառուներ և նրանց ընտանիքների հետ աշխատանքի արդյունքում նպաստել այդ շահառուների տեղավորմանը կենտրոն, կանխել խնամքի հատուկ կենտրոններում երեխաների հայտնվելուն, ինչպես նաև և նրանց ընտանիքներում առկա խնդիրները: Այսպիսով 3-րդ տարուց սկսած ինտենսիվ աշխատանքներ են իրականացվելու կանխարգելու համար կյանքի դժվարին իրավիճակներում հայտնված երեխաների մուտք շուրջօրյա խնամքի հաստատություններ, ինչպես նաև շուրջօրյա խնամքի հաստատություններում խնամվող անձանց ընտանիք տեղափոխման ուղղությամբ Շարունակել հաշմանդամություն ունեցող երեխաներին տրամադրել վերականգնողական ծառայություններ, նպաստել նրանց սոցիալ-հոգեբանական ներառմանը հասարակություն:

## 2.5. Ծրագրի իրականացման ակնկալվող արդյունքը

Սույն ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման արդյունքում ակնկալվում է, որ. «ԼԻԱՐԺԵՔ ԿՅԱՆՔ» ներառական հասարակության խթանման հասարակական կազմակերպությունը կվերանորոգի Ստեփանավան քաղաքում Սայաթ Նովա 3 հասցեում գտնվող կառույցը, որը կհանդիսանա վերականգնողական կենտրոն և «Լիարժեք կյանք» ՀԿ-ի Ստեփանավանի «Հաշմանդամություն ունեցող երեխաների և երիտասարդների սոցիալ-հոգեբանական աջակցություն Ստեփանավանի և Տաշիրի տարածաշրջանի համայնքային ցերեկային կենտրոն»-ը /ներկայումս գտնվում է նկուղային հարկում, խոնավ ու անբարվոք վիճակում/ կտեղափոխվի վերանորոգված կենտրոն, որտեղ կսպասարկվի Ստեփանավան և Տաշիր քաղաքների և հարակից գյուղերի շուրջ 250 շահառուի, որից ամսական միջինը 60 շահառու մշտապես հաճախմամբ: Շահառուների սոցիալական վերականգնում՝ հմտությունների զարգացում, նրանց կարողություններին համարժեք



գիտելիքների ձեռքբերում, անկախ և ինքնուրույն կյանք վարելու կարողությունների զարգացում, կրթական, ժամանցային, ճանաչողական միջոցառումների իրականացում: Տարեկան յուրաքանչյուր երեխայի անհատական ծրագրում արձանագրել գնահատականի 10-15% դրական աճ (տառաճանաչության, ինքնասպասարկման, հաղորդակցման հմտությունների և այլն): Տարեկան առնվազն 4 միջոցառման ( երեխայի պաշտպանության օր, հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության օր, ժամանցային միջոցառումներ և այլն) կազմակերպում՝ հանրային իրազեկմանը և երեխաների սոցիալական ներառմանն ուղղված:

Կենտրոնի կողմից մատուցված ծառայությունների միջոցով իրականացված աշխատանքների արդյունքում ակնկալվում են հետևյալ որակական ցուցանիշները.

ամսական առնվազն 60 շահառուի տրամադրվում է ծառայությունների նկարագրում նշված նվազագույն չափորոշիչներին համապատասխան ծառայություններ,

կանխարգելվում է յուրաքանչյուր եռամսյակ առնվազն 5 անձի մուտք շուրջօրյա խնամքի հաստատություններ, տարեկան 20 անձ,

Գործընկեր կազմակերպությունները կսկսեն կիրառել ՖՄԴ գնահատման մեթոդը և համահունչ կաշխատեն ԲԺշկասոցիալական փորձաքննության հանձնաժողովների հետ: Նախատեսվում է, որ մարզում գործող 5 կազմակերպություններ կկիրառեն գնահատման այս մեթոդը, ինչպես նաև կենտրոնում կիրականացվեն երեխաների կարիքների գնահատում և կկազմվեն աջակցության պլաններ, որոնք կօգնել առավել նպատակային ծառայություններ մատուցել: Նախատեսում ենք ի հավելումը վերը նշված ծառայությունների ընդհանուր թվով գնահատել 180 երեխա և ուղղորդել ծառայություններ մատուցող կառույցներ: *(նշել ծրագրի չափերի արդյունքները, շահառուների թիվը, մյուս անհրաժեշտ տեղեկությունները)*

#### 2.4. Ծրագրի իրականացման համար ներդրումները /ներդրումային ծրագիր/

Համաձայն մասնագիտացված կազմակերպության կողմից/«Վանսեյսմշին» ՍՊԸ կողմից տրված և «Հայսեյսմշին և ԿՊ ՀԳԻ» ԲԲԸ –ի հետ համաձայնեցված/ 2011թ փետրվարի 8-ին շենքի տեխնիկական վիճակի մասին տրված մասնագիտական եզրակացության, /կից ներկայացված է/ շենքը գտնվում է անբավարար վիճակում և վնասվածության մակարդակը դասվում է 3-րդ աստիճանի: Ուստի շենքը շահագործելու համար անհրաժեշտ է ամրացում և հիմնանորոգում: Ընդհանուր առմամբ ներդրումները կկազմի շուրջ 20 մլն ՀՀ դրամ, որը կուղղվի շենքի ամրացման, կտուրի և ներքին հիմնանորոգման, ինչպես նաև շենքի պահպանման աշխատանքներին փուլերով՝



### 1-ին փուլ

Գումարը՝ 14 մլն ՀՀ դրամ

Ժամանակահատվածը՝ 2019-2021թթ.

Աշխատանքների ծավալը/նկարագիրը.

Տվյալ ժամանակահատվածում կվերանորոգվի տանիքը, կիրականացվեն շենքի ամրացման աշխատանքներ: Ամրացման աշխատանքներից և տանիքի նորոգումից հետո կիրականացվի առաջին հարկի մուտքի, պատուհանների և դռների տեղադրում, և 110 քմ. մակերեսի ներքին հարդարում, ներառյալ՝ սանհանգույցը, էլ. սնուցումը, ջրամատակարարման և ջրահեռացման համակարգը: Այս փուլի աշխատանքների իրականացումը թույլ կտա «Հաշմանդամություն ունեցող երեխաների և երիտասարդների սոցիալ-հոգեբանական աջակցություն Ստեփանավանի և Տաշիրի տարածաշրջանի համայնքային ցերեկային կենտրոն»-ի աշխատանքները 2021թ-ից իրականացնել այս տարածքում:

### 2-րդ փուլ

Գումարը՝ 2 մլն ՀՀ դրամ

Ժամանակահատվածը՝ 2022-2025թթ.

Աշխատանքների ծավալը/նկարագիրը.

Տվյալ ժամանակահատվածում կվերանորոգվի առաջին հարկի մնացած հատվածի 110 քմ. մակերեսի ներքին հարդարում, ներառյալ՝ 2-րդ սանհանգույցը, էլ. սնուցումը, ջրամատակարարման և ջրահեռացման համակարգը: Այս փուլի աշխատանքների իրականացումը թույլ կտա բարելավել «Հաշմանդամություն ունեցող երեխաների և երիտասարդների սոցիալ-հոգեբանական աջակցություն Ստեփանավանի և Տաշիրի տարածաշրջանի համայնքային ցերեկային կենտրոն»-ի աշխատանքները, 2026թ-ից առավել ծավալուն իրականացնել այս տարածքում՝ ունենալ երգոթերապիայի, նախամասնագիտական ուսուցման և մասնագիտական կոդմնորոշման առանձին սենյակներ:

### 3-րդ փուլ

Գումարը՝ 4 մլն ՀՀ դրամ

Ժամանակահատվածը՝ 2026-2030թթ.

Աշխատանքների ծավալը/նկարագիրը.



Տվյալ ժամանակահատվածում կվերանորոգվի երկրորդ հարկի 220 քմ. մակերեսի ներքին հարդարում, ներառյալ՝ երկու սանհանգույցը էլ. սնուցումը, ջրամատակարարման և ջրահեռացման համակարգը: Այս փուլի աշխատանքների իրականացումը թույլ կտա ընդլայնել հաշմանդամություն ունեցող անձանց մատուցվող ծառայությունները՝ հաշմանդամություն ունեցող երեխաների ապահով միջավայրի ստեղծմանը առօրյա կյանքին լիարժեք մասնակցելու և անկախ կյանքի հմտություններ ձեռք բերելու համար, ինչպես նաև «Հաշմանդամություն ունեցող երեխաների և երիտասարդների սոցիալ-հոգեբանական աջակցություն Ստեփանավանի և Տաշիրի տարածաշրջանի համայնքային ցերեկային կենտրոն»-ի աշխատանքները, 2028թ-ից առավել ծավալուն իրականացնել այս տարածքում՝ ունենալ նաև ֆիզիոթերապիայի, սենսորային թերապիայի, նախամասնագիտական ուսուցման և մասնագիտական կողմնորոշման դասընթացներ և ռոբոտաշինության և սմարթ խմբակներ ու հանգստի առանձին սենյակներ: Տարեկան կտրվածքով շահառուների թիվը հասցնելով 350-ից 400 -ի:

#### Կից ներկայացվում է

1. «Լիարժեք կյանք» ՀԿ -ի պետական միասնական գրանցամատյանից քաղվածք առ 23.02.2018

2. «Լիարժեք կյանք» ՀԿ -ի կանոնադրության պատճենը

3. «Լիարժեք կյանք» ՀԿ -ին Ստեփանավան քաղաքի Սայաթ-Նովա 3 հասցեում գտնվող 465.6 քառ. մետր մակերեսով շենքի օգտագործման իրավունքը 10 տարի ժամկետով երկարաձգման, շինվերանորոգման և նպատակային օգտագործման ծրագիրը իր հավելվածներով՝

Հավելված ա/ ՀՀ կառավարության 2010 թ. հունվարի 21 -ի թիվ 29 Ա որոշման պատճենն շենքը անհատույց օգտագործման իրավունքով «Լիարժեք կյանք» ՀԿ-ին տրամադրելու մասին:

Հավելված բ/ «Հաշմանդամություն ունեցող երեխաների և երիտասարդների սոցիալ-հոգեբանական աջակցություն Ստեփանավանի և Տաշիրի տարածաշրջանի համայնքային ցերեկային կենտրոն»-ի աշխատանքի նկարագիրը, որը գործում է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից տրամադրվող սուբսիդավորման համաֆինանսավորմամբ:


Հավելված գ/. Ջինիշյան հիշատակի հիմնադրամի կողմից 14 մլն ՀՀ դրամ ներդրման մասին 19.06.2018թ. թիվ ԱԺ-37 գրությունը



Հավելված դ/ «Վանսեյսմշին» ՍՊԸ մասնագիտացված կազմակերպության կողմից 2011թ փետրվարի 8-ին տրված և «Հայսեյսմշին և ԿՊ ՀԳԻ» ԲԲԸ –ի հետ համաձայնեցված շենքի տեխնիկական վիճակի, վթարայնության մասին տրված մասնագիտական եզրակացությանը:

«ԼԻԱՐԺԵԲԿՅԱՆՔ» ՀԿ ՆԱԽԱԳԱՀ



 ՍՈՒՐԵՆ ՄԱՂԱՔԹՅԱՆ

ք. Երևան